են, որ դա «չար» աչքից է։ Եւ ահա տարաբախտ հիւանդին չար աչքից փրկելու համար վերցնում են բուռով աղ և հիւանդի գլխի շուրջը մի քանի անգամ պտտցնելուց յետոյ՝ նետում են կրակի մէջ ասելով. «չար աչքը թող այսպէս տրաքտըրաքուի»։ Իսկոյն բոցերի միջից լսւում է ճըրթ-ճըրթոց և այդ տրաքտրաքոցի ճայթումներից ա-կանատեսները որոշում են չար աչքի սաստիկ կամ թոյլ ներգործութեան չափն ու սահմանը։ Այսպէս-սի դէպքերում հաւատով և ջերմեռանդ կանայք հիւանդի գլխի չորս կողմը շրջեցնում են մի զոյգ դեղին մեղրամոմ և ապա վառում են՝ ս. Եղիշէ առաքեալի արագահաս օգնութիւնն ու զօրութիւնը հայցելով և կամ խոստանում են իրենց ունեցած անասուններից մէկը նուիրել իրենց աղքատ հարևանին։ Բարեբախտաբար երբոր հիւանդն առողջանում է, նրա ծնողները իսկոյն կատարում են իրենց խոստումը՝ կենդանի մի հորթ կամ կով ընծայելով իրենց աղքատ դրացուն։ Եթէ գիւղացու կթան կովը կամ գոմէշը և կամ մի որևէ անասուն մեռնում է անտառում և կամ կորչում է, այն ատեն գրպանի ծալովի դանակը ծալում և ձգում են աղով լի տոպրակի մէջ, որպէսզի վայրենի գայլերի ու գաղանների բերանները կապուին և չկարողանան մօտենալ իրենց անասունին։ Երբոր անասունը գտնւում է, նրանք հաւատում են, որ բերանի վրայ ծալուող դանակն է ազատել իրենց խեղճ անասունին չար գազաններ-ի պատառատող ժանիքներից։ Կատաղած շուն կամ որևէ գաղան երբոր խածում և վիրաւորում